ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՁԻՆՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևին (նկարին) համապատասխան: Տաբատ (կանացի) (Ձև 7): Պատրաստվում է ազատթող փողքերով, մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ), ուղիղ է, առանց ծալքերի, ունի բնական մետաքսյա աստառ (8-C5-BШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ) և մուգ կարմիր եզրաշերտ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Տաբատի գոտին գոտեմակօղերով է, կոճկվում է ձախ կողմից 2 կոճակով, գրպանները թեք են, ներկարված և ունեն կայծակնաճարմանդ: Տաբատի առջևի մասի յուրաքանչյուր կողմում մշակվում է մեկական սեղմոն՝ արդուկի գծի ուղղությամբ, իսկ ետևի մասի յուրաքանչյուր կողմում՝ երկուական սեղմոն: Տաբատի գոտին ունի 55 մմ լայնություն, գոտու վրա կարվում է 8 կամրջակ, որոնց երկարությունը 55 մմ է, լայնությունը՝ 1,8 սմ, իսկ տաբատի կողքի գրպաններն ունեն 3,5 սմ թեքություն: Նախքան տաբատների պատրաստումը տաբատների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Տաբատների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև տաբատների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն

	ապրանքի անվանումը, քանակը, չափսերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Зинтекстил в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	Ниже представленные товары создаются в соответствии с критериями и формой (фотографией), утвержденными постановлением Правительства Республики Армения N 1517-А от 20.12.2018г. Брюки (женские) (Форма 7). Изготавливается со свободными краями, из темно-синей полушерстяной ткани (шерсть 67%, полиэстер 33%, плотностью 317 г/м2), прямые, без складок, имеет натуральную шелковую подкладку (из артикула 8-С5-ВШ темно-синей ткани плотностью 100г/м2) и темно - красную тесьму (из суконной ткани 2581 артикула). Пояс брюк со шлевками, застегивается с левой стороны на 2 пуговицы, карманы кривые, вшитые и имеют застежку-молнию. В любой стороне передней части брюк разрабатывается по-одной вытачке – по направлению линии утюга, а в любой части задней стороны - по две вытачки. Пояс брюк имеет ширину 55 мм, на поясе шьется 8 мостиков, длина которых 55 мм, ширина 1,8 см, а боковые карманы брюк имеют кривость 3,5 см. До изготовления брюк цветовая гамма брюк согласуется с Покупателем. Полное количество брюк должно изготавливаться из одинаковой ткани. При этом, заранее (до шитья брюк) Продавец представляет Покупателю выданное аккредитованной в РА организацией заключение лабораторного исследования о составе, категории, стабильности краски и поверхностной плотности указанной ткани. Упаковка товаров - в полиэтиленовых прозрачных пакетах, на пакетах должны быть отмечены наименования, согласно взятым индивидуальным размерам, маркированы, на марках должны быть отмечены наименование, количество, размеры товара.